Արձանագրություն 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-28/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

12 օգոստոսի, 2025թ., ժ 16:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ծառայողական պարտականությունները կատարող,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Անահիտ Խաչատրյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի ժամանավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-28/25» ծածկագրով գնանշման հարցման գնումների միջոցով առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 04.08.2025թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար **«Գյումրի համայնքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգման երկրորդ փուլի երկրորդ մասի աշխատանքներ»** ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-28/25» ծածկագրով գնանշման հարցման գնումների համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Անվանումը	Հասցե
1.	«Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ	Արարատ, Պ. Սևակի 5փ, 10 տնակ

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը կազմվել և ուղարկվել են հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

1.6. Մասնակցի առաջարկած գինը

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	«Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ		**Նախահաշվային գին**
		առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	«Գյումրի համայնքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգման երկրորդ փուլի երկրորդ մասի աշխատանքներ»	66 375 000	79 650 000	79 756 329

Հանձնաժողովը արձանագրեց՝ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-28/25» ծածկագրով գնանշման հարցման մասնակցության հայտ է ներկայացրել «Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ-ն, որի ներկայացրած գնային առաջարկը պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում է:

Հանձնաժողովը որոշեց՝

- Հաղթող մասնակից ճանաչել «Ա.Ա.Մ. 33» ՍՊԸ -ին:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվում:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագիծը, ինչն անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ գումարի տեսքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ավետիս Առաքելյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

---------- Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

---------- Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

---------- Անահիտ Խաչատրյան (ԳՊ/ԲԱ)

---------- Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)

Քարտուղար՝